

լով իր հետ առանձնակի՝ իսկ ինսարովը չփոթուած էր երեւում և խուսափում էր Ելենայի հայեացքից։ «Միթէ նա հէնց իսկոյն կը սկսէ մնաք բարե ասելը», մտածում էր Ելենան։ Եւ իրաւ, ինսարովը սկսել էր իր խօսքը ուղղել Աննա Վասիլևիչ-նային։ Ելենան շտապով վեր կացաւ և կանչեց նրան դէպի մի կողմ, դէպի պատուհանը։ Երիցակիներ զարմացաւ և փորձեց շուռ գալ դէպի այն կողմը։ Բայց նա այնքան պինդ էր կապել կօրսետը, որ վերջինս ճոճուում էր ամեն անգամ, երբ նա շարժողութիւն էր գործում։ Երիցակիներ մնաց անշարժ։

— Լսեցէք շտապով ասաց Ելենան, — ես գիտեմ, թէ ինչու էք դուք եկել։ Անդրէյ Պետրովիչը ինձ հաղորդել է ձեր գիտաւորութիւնը, բայց ես ձեզ խնդրում եմ, ես ձեզ աղաչում եմ հրաժեշտի ողջոյն չը տալ մեզ այսօր, այլ գալ այստեղ վաղը սրանից մի քիչ շուտ, ժամի մօտ տասն և մէկին։ Ես պիտի երկու խօսք ասեմ ձեզ։

Ինսարովը լուռ թեքեց գլուխը։

— Ես ձեզ չեմ պահիր... Խոստանում էք ինձ։

Ինսարովը նորից գլուխ տուեց, բայց ոչինչ չասաց։

— Լէնօշկա, արի այստեղ, ասաց Աննա Վասիլևիչնան, տես թէ երիցակիներ ինչ հիմնալի բիդիկիւլ ունին։

— Ինքս եմ գործել, նկատեց երիցակիներ։

Ելենան հեռացաւ պատուհանից։

Ինսարովը քառորդ ժամից աւել չը մնաց Ստախովների մօտ։ Ելենան դիտում էր նրան գաղտուկ։ Ինսարովը կանգնած տեղը զադար չունէր, առաջուայ պէս չէր իմանում թէ ուր դարձնէ աչքերը և գնաց ինչ որ օտարոտի կերպով, յանկարծակի, կ'ասես անցայտացաւ։

Դանդաղ անցաւ այդ օրը Ելենայի համար. աւելի դանդաղ էր անցնում երկար, երկար գիշերը։ Ելենան կամ նստում էր մահճակալի վրայ, գրկելով ծնկները և դնելով նրանց վրայ գլուխը, կամ մօտենում էր պատուհանին, և մտածում էր, մտածում, ուժաթափուելու չափ միշտ մի և նոյն էր մտածում։ Նրա սիրտը կ'ասես թէ քարացել էր, կ'ասես թէ չքացել էր կրծքից. նա չէր զգում թէ սիրտ ունի, բայց գլխի մէջ ծանր խփում էին երակները և այրում էին նրա մազերը, և շրթունքները չորանում էին «Նա կը գայ... նա մնաք բարե չասաց մայրիկին... նա չի խաբի... Միթէ Անդրէյ Պետրովիչը ճիշտ էր ասում։ Անկարելի է... Նա խօսքերով չը խոստացաւ գալ... Միթէ ես ընդ միշտ բաժանուած եմ նրանից»... Ահա ինչ մտքեր էին որ չէին թողնում նրան. իսկապէս որ չէին թողնում.

նրանք, այդ մտքերը, չէին գալիս, չէին վերադառնում, այլ անդադար տալն ու վրայ էին դառնում նրա մէջ. ինչպէս մշուշ «Նա ինձ սիրում է», յանկարծ բռնկւում էր այդ միտքը նրա ամբողջ էութեան մէջ, և նա ուշի ուշով նայում էր իսաւարին. ոչ ոք չէր տեսնում այն դադարի ժպիտը, որ բաց էր անում նրա շրթունքները... Բայց նա իսկոյն թափահարում էր գլուխը, տանում էր դէպի պարանոցը ձեռքերի ծալած մատները և նորից, ինչպէս մշուշ, ստան ու վրայ էին դառնում նրա մէջ նախկին մտքերը Առաւօտից առաջ նա հանեց իր շորերը և պառկեց անկողնում, բայց քնել չը կարողացաւ Արեգակի առաջին հրային ճառագայթները խփեցին նրա սենեակին... «Օ», եթէ նա ինձ սիրում է», բացականչեց նա յանկարծ, և չամաչելով իր վրայ ընկած լոյսից, բաց արեց իր գիր, կը...

Նա վեր կացաւ, հագնուեց, ցած իջաւ. Տանը ոչ ոք չէր զարթնել. Նա գնաց այգին. բայց այդտեղ այնպիսի հանդարտութիւն էր, այնպիսի կանաչ կնիք, այնպիսի թարմութիւն, թրուշունները այնքան ընտանեքար էին ճեճւում, ծաղիկները այնպէս ուրախ էին նայում, որ նա մի տեսակ երկիւղ զգաց. «Օ», մտածեց նա, եթէ սա ճիշտ է, չը կայ մի հատ խոտ, որ բախտաւոր լինէր ինձանից, բայց ճիշտ է այսօր. Նա վերադարձաւ իր սենեակը և ժամանակը մի կերպ սպանելու համար, սկսեց փոխել հագուստը. Բայց ամեն ինչ ընկնում և սահում էր նրա ձեռքերից, և դեռ կիսով չափ հագնուած նստած էր իր հայելու առաջ, երբ նրան կանչեցին չայ խմել. Նա ցած գնաց, մայրը նկատեց նրա գունատութիւնը, բայց միայն ասաց. «այսօր ինչ հետաքրքրական ես», և, հայեարեով չափելով նրան, աւելացրեց. «Այդ շորը քիչ շատ լաւ է գալիս. դու նրան հագիր ամեն ժամանակ, երբ կամենում ես մէկին դուր գալ»: Ելնան ոչինչ չը պատասխանեց և նստեց անկիւնում: Մինչ այս մինչ այն խփեց ինն ժամը. մինչև տասն և մէկը դեռ երկու ժամ կար: Ելնան ձեռքն առաւ մի գիրք, յետոյ կարը, յետոյ էլ կրկին գիրքը. յետոյ նա խօսք տուեց իրան հարիւր անգամ անցնել մի ծառուղիով, և անցաւ հարիւր անգամ. յետոյ նա երկար մտիկ էր տալիս թէ ինչպէս Աննա Վասիլեւնան պատենաւ էր դարսում խաղաթղթերից... ու նայեց ժամացոյցին. դեռ տասը չը կար: Շուրթերը եկաւ հիւրասենեակը: Ելնան փորձեց խօսք բաց անել նրա հետ, և ներողութիւն էր խնդրում նրանից, ինքն էլ չիմանալով թէ ինչի համար... Իւրաքանչիւր խօսքը չափեց թէ ջանքեր էր պահանջում նրանից, բայց նրա մէջ մի ինչ որ օ...

տարրոտի շուարում էր զարթեցնում: Շուրքինը խոնարհուեց
դէպի նրան: Ելենան ծաղրի էր սպասում, աչքերը բար-
ձրացրեց, և տեսաւ իր առջև մի տխուր և բարեկամական
դէմք... Նա ժպտաց այդ դէմքին: Շուրքինը նոյնպէս ժպտաց
լուռ և հանդարտ քայլերով դուրս գնաց: Ելենան կամենում էր
նրան կանգնեցնել, բայց իսկոյն չը յիշեց թէ ինչպէս կանչէ
նրան: Վերջապէս խփեց տասն և մէկերորդ ժամը: Նա սկսեց
սպասել, սպասել, սպասել և ականջ դնել: Նա այլ ևս ոչինչ չէր
կարողանում անել. նա մինչև իսկ դադարեց մտածելուց: Նրա
սիրտը կենդանացաւ և սկսեց աւելի պինդ և պինդ խփել և
օտարոտի բան, ժամանակը կարծես սկսեց աւելի արագ թռչել:
Անցաւ քառորդ ժամ, անցաւ կէս ժամ, անցաւ էլի մի քանի
րոպէներ, Ելենայի կարծիքով, և յանկարծ նա ցնցուեց. խփեց ոչ
թէ տասներկու ժամը, այլ մէկը: «Նա չի գայ, նա կը գնայ,
մնաք բարև, չհասկնալ... Այս միտքը, արիւնի հետ միասին,
խփեց նրա գլխին: Նա զգաց որ շունչը արգելւում է, որ նա
պատրաստ է հեկեկալ... Նա վազեց իր սենեակը և երեսնիվայր
ընկաւ անկողնի վրայ, դէմքը դնելով իր ձեռքերի վրայ:

Կէս ժամ պառկած էր նա անշարժ. նրա մտածների արան-
քով արտասուեցները թափւում էին բարձի վրայ: Նա յանկարծ
վեր կայաւ ևւ նստեց. մի ինչ որ օտարոտի բան էր կատար-
ւում նրա մէջ. նրա դէմքը փոխուեց, թաց աչքերը իրանք
իրանց չորացան և փայլեցին, յօնքերը ցած իջան, չրթուեցները
սեղմուեցան: Անցաւ էլի կէս ժամ: Ելենան վերջին անգամ
ականջ դրեց. արգեօք չի հասնի նրան ծանօթ ձայնը: Վեր կա-
ցաւ, զրեց զլխարկը, հագաւ ձեռնոցները, թիկնոցը, գցեց ու-
սերին և աննկատելի կերպով դուրս գալով տանից, աշխոյժ
քայլերով գնաց այն ճանապարհով, որ տանում էր դէպի Բեր-
սենսի բնակարանը:

XVIII

Ելենան գնում էր զլուխը կորացրած և անշարժ հայեաց-
քով առջևին մտիկ տալով: Նա ոչնչից չէր վախենում, նա ոչ
մի բան չէր կշռադատում. նա ուզում էր մի անգամ էլ տես-
նուել ինսարօվի հետ: Գնում էր նա, չը նկատելով, որ արե-
գակը վաղուց է ծածկուել ծանր սև թուխպերի տակ, որ քամին
կամ սաստկանալով կամ թուլանալով աղմկում էր ծառերի մէջ
և չարժում էր նրա շորերը, որ փռնին յանկարծ բարձրանում

նրանք, այդ մտքերը, չէին գալիս, չէին վերադառնում, այլ անդադար տալին ու վրայ էին դառնում նրա մէջ. ինչպէս մշուշ: «Նա ինձ սիրում է», յանկարծ բռնկւում էր այդ միտքը նրա ամբողջ էութեան մէջ, և նա ուշի ուշով նայում էր իսաւարին. ոչ ոք չէր տեսնում այն դաղտնի ժպիտը, որ բաց էր անում նրա շրթունքները... Բայց նա իսկոյն թափահարում էր գլուխը, տանում էր դէպի պարանոցը ձեռքերի ծալած մատները և նորից, ինչպէս մշուշ, ստալին ու վրայ էին դառնում նրա մէջ նախկին մտքերը: Առաւօտից առաջ նա հանեց իր շորերը և պառկեց անկողնում, բայց քնել չը կարողացաւ: Արեգակի առաջին հրային ճառագայթները խփեցին նրա սենեակին... «Օ», եթէ նա ինձ սիրում է», բացականչեց նա յանկարծ, և չամաչելով իր վրայ ընկած լոյսից, բաց արեց իր գիրքը...

Նա վեր կացաւ, հագնուեց, ցած իջաւ: Տանը ոչ ոք չէր դարձնել: Նա գնաց այգին. բայց այդտեղ այնպիսի հանդարտութիւն էր, այնպիսի կանաչ կար, այնպիսի թարմութիւն, թրջուկները այնքան ընտանեւար էին ճւճում, ծաղիկները այնպէս ուրախ էին նայում, որ նա մի տեսակ երկիւղ զգաց: «Օ», մտածեց նա, եթէ սա ճիշտ է, չը կայ մի հատ խոտ, որ բախտաւոր լինէր ինձանից, բայց ճիշտ է այս: Նա վերադարձաւ իր սենեակը և ժամանակը մի կերպ սպանելու համար, սկսեց փոխել հագուստը: Բայց ամեն ինչ ընկնում և սահում էր նրա ձեռքերից, և դեռ կիսով չափ հագնուած նստած էր իր հայելու առաջ, երբ նրան կանչեցին չայ խմել: Նա ցած գնաց, մայրը նկատեց նրա գունատութիւնը, բայց միայն ասաց. «այսօր ինչ հետաքրքրական ես», և, հայեացքով չափելով նրան, աւելացրեց. «Այդ շորը քեզ շատ լաւ է գալիս. դու նրան հագիր ամեն ժամանակ, երբ կամենում ես մէկին դուր գալ: Նլինան ոչինչ չը պատասխանեց և նստեց անկիւնում: Մինչ այս մինչ այն խփեց ինն ժամը. մինչև տասն և մէկը դեռ երկու ժամ կար: Նլինան ձեռքն առաւ մի գիրք, յետոյ կարը, յետոյ էլ կրկին գիրքը. յետոյ նա խօսք տուեց իրան հարիւր անգամ անցնել մի ծառուղիով, և անցաւ հարիւր անգամ. յետոյ նա երկար մտիկ էր տալիս թէ ինչպէս Աննա Վասիլեւնան պատենաւ էր դարսում խաղաթղթերից... ու նայեց ժամացոյցին. դեռ տասը չը կար: Շուրջինը եկաւ հիւրասենեակը: Նլինան փորձեց խօսք բաց տանել նրա հետ, և ներողութիւն էր խնդրում նրանից, ինքն էլ չիմանալով թէ ինչի համար... Իւրաքանչիւր խօսքը չասնէր թէ ջանքեր էր պահանջում նրանից, բայց նրա մէջ մի ինչ որ օ-

տարրոտի շուարում էր զարթեցնում: Շուրքինը խոնարհուեց
դէպի նրան: Ելննան ծաղրի էր սպասում, աչքերը բար-
ձրացրեց, և տեսաւ իր առջև մի տխուր և բարեկամական
դէմք... Նա ժպտաց այդ դէմքին: Շուրքինը նոյնպէս ժպտաց
լուռ և հանդարտ քայլերով դուրս գնաց: Ելննան կամենում էր
նրան կանգնեցնել, բայց իսկոյն չը յիշեց թէ ինչպէս կանչէ
նրան: Վերջապէս խփեց տասն և մէկերորդ ժամը: Նա սկսեց
սպասել, սպասել, սպասել և ականջ դնել: Նա այլ ևս ոչինչ չէր
կարողանում անել. նա մինչև իսկ դադարեց մտածելուց: Նրա
սիրտը կենդանացաւ և սկսեց աւելի պինդ և պինդ խփել և
օտարոտի բան, ժամանակը կարծես սկսեց աւելի արագ թռչել:
Անցաւ քառորդ ժամ, անցաւ կէս ժամ, անցաւ էլի մի քանի
րոպէներ, ելննայի կարծիքով, և յանկարծ նա ցնցուեց. խփեց ոչ
թէ տասներկու ժամը, այլ մէկը: «Նա չի գայ, նա կը գնայ,
մնաք բարեւ չասելով»... Այս միտքը, արիւնի հետ միասին,
խփեց նրա գլխին: Նա զգաց որ շունչը արգելւում է, որ նա
սպառաքս է հեկեկալ... Նա վազեց իր սենեակը և երեսնիվայր
ընկաւ անկողնի վրայ, դէմքը դնելով իր ձեռքերի վրայ:

Կէս ժամ պառկած էր նա անշարժ. նրա մատների արան-
քով արտասուէքները թափւում էին բարձի վրայ: Նա յանկարծ
վեր կացաւ ևւ նստեց. մի ինչ որ օտարոտի բան էր կատար-
ւում նրա մէջ, նրա դէմքը փոխուեց, թաց աչքերը իրանը
իրանց չորացան և փայլեցին, յօնքերը ցած իջան, չրթունքները
սեղմուեցան: Անցաւ էլի կէս ժամ: Ելննան վերջին անգամ
ականջ դրեց. արդեօք չի հասնի նրան ծանօթ ձայնը: Վեր կա-
ցաւ, զրեց գլխարկը, հագաւ ձեռնոցները, թիկնոցը, գցեց ու-
սերին և աննկատելի կերպով դուրս գալով տանից, աշխոյժ
քայլերով գնաց այն ճանապարհով, որ տանում էր դէպի Բեր-
սենելի բնակարանը:

XVIII

Ելննան գնում էր գլուխը կորացրած և անշարժ հայեաց-
քով առջևին մօտիկ տալով: Նա ոչնչից չէր վախենում, նա ոչ
մի բան չէր կշռադատում. նա ուզում էր մի անգամ էլ տես-
նուել Խնարովի հետ: Գնում էր նա, չը նկատելով, որ արե-
զակը վաղուց է ծածկուել ծանր սև թուխպերի տակ, որ քամին
կամ սաստկանալով կամ թուլանալով աղմկում էր ծառերի մէջ
և չարժում էր նրա չորերը, որ փոշին յանկարծ բարձրանում

էր և սիւնի պէս սլանում էր ճանապարհով... Խոշոր անձրեր կաթկաթեց, նա այդ էլ չէր նկատում. բայց անձրեր սկսեց աւելի սաստկանալ, փայլատակեց կայծակը, որոտը դղրդաց: Ելնան կանգ առաւ, չորս կողմը նայեց... Նրա բախտից, քիչ հեռու այնտեղից, ուր վրայ էր հասել փոթորիկը, դտնւում էր մի հին անտէր մնացած մատուռիկ, որ շինուած էր քանդուած ջրհորի վրայ: Ելնան վազեց դէպի այնտեղ և մտաւ ցածրիկ ծանկի տակ: Անձրեր առուի պէս էր թափւում. երկինքը ամբողջապէս ծածկուած էր ամպերով: Մի համբոյ յուսահատութեամբ Ելնան նայում էր արագ թափուող կաթիլների խիտ ցանցին: Ինսարովին տեսնելու վերջին յոյսը կորաւ: Մուրացիկ պառաւ կինը մտաւ մատուռի մէջ, թափ տուեց շորերը, գլուխ տալով սաաց. «անձրեկեց, աղջիկ պարոն», և տնքտնքալով ու ախ քաշելով, նստեց ջրհորի մօտ, պատի բեկորի վրայ: Ելնան ձեռքը տարաւ դրպանը. պառաւը նկատեց այդ շարժողութիւնը և նրա կնճռոտ ու դեղին դէմքը, որ մի ժամանակ գեղեցիկ էր եղել, կենդանացաւ «Շնորհակալ եմ քեզանից, սիրելիս», սկսեց նա: Ելնան զրպանում չը դտաւ իր քսակը, իսկ պառաւը արդէն մեկնել էր ձեռքը...

—Փող չը կայ մօտս, տատիկ, ասաց Ելնեան,—բայց ահա վերցրու, մի բանի պէտք կը գայ:

Նա տուեց պառաւին իր թաշկինակը:

—Օ-հ, սիրունիկա, ասաց մուրացկանուհին, ինչին է քո թաշկինակը: Բայց կարելի է թողնան փարգելել, երբ նա մարդու կը գնայ: Աստուած քո բարութեան փոխարէնը տայ:

Տարածուեց որոտի հարուածը:

—Տէր Յիսուս Քրիստոս, մրմնջաց մուրացկանուհին և երեք անգամ խաչակնքեց.—Հէնց կ'ասե՛ս ես քեզ տեսել եմ, աւելացրեց նա, քիչ սպասելուց յետոյ:—Դու չէիր որ ինձ Քրիստոսի ողորմութիւնը տուիր:

Ելնան ուշի ուշով նայեց պառաւին և ճանաչեց նրան:

—Այո, տատիկ, պատասխանեց նա.—Դու դու հարցրիր ինձանից թէ ինչո՞ւ այնքան տխուր եմ ես:

—Այդպէս է, աղւնակա, այդպէս է: Ասում էի որ դու նա ես: Եւ դու կարծես այժմ էլ դարդոտ ես: Ահա քո թաշկինակն էլ թաց է, երեի արտասուէքներից: Օհ, դուք, ջահէ՛լներ, ձեզ բոլորիդ համար միայն դարդ կայ, միայն մեծ վիշտ:

—Ի՞նչ վիշտ, տատիկ:

—Ի՞նչ վիշտ էհ, սիրուն աղջիկ, դու մի խաբիր ինձ, պառաւիս: Գիտեմ ես թէ քո դարդը ինչ է. դա որբի վիշտ չէ:

Ձէ որ ես էլ եմ եղել ջահէլ, սիրելիս. այդ բոլոր անցքերը իմ գլխովս էլ են անցել: Այն: Ես քեզ, քո բարութեան փոխարէն, ահա ինչ կ'ասեմ, եթէ քեզ հանդիպել է լաւ մարդ, ոչ թէ մի ցանցատը, պինդ բռնիր: Եթէ կը լինի, կը լինի, եթէ չի լինի, երևի Աստուծուն այդպէս էր հաճելի: Այն. ինչ ես զարմացել ինձ վրայ. ես նոյն կախարդն եմ: Ուզում ես, ես կը տանեմ քո թաշկինակի հետ քո ամբողջ վիշտը: Կը տանեմ, և կը պրծնի: Տեսնում ես, հիմա անձրեր բարակեց. դու գեռ սպասիր, իսկ ես կը գնամ: Անձրեր ինձ հօ առաջին անգամը չը պիտի թրջէ: Միտդ պահիր, սիրելիս, կար տխրութիւն, կորաւ տխրութիւնը, անունն էլ չը մնաց: Տէր Աստուած, դու օգնես:

Մուրականուհին վերկացու տեղից, դուրս գնաց մատուռից և գնաց իր ճանապարհով: Ելնան ասլա՞ծ նայում էր նրա ետևից: «Ի՞նչ է սա նշանակում», ախմայ չնշաց նա:

Անձրեր գնալով բարականում էր, մի ակնթարթ եղաւ, երբ արեգակը փայլեց: Ելնան արդէն պատրաստում էր թողնել իր ապաստանը... Յանկարծ, մատուռից մի տասը քայլ հեռու, նա տեսաւ Ինսարովին: Վերարկուի մէջ փաթաթուած՝ նա դալիս էր նոյն ճանապարհով, որով եկել էր Ելնան, թւում էր թէ նա տուն է շտապում:

Ելնան ձեռքով յենուեց փոքրիկ դստիկոնի հին վանդակին, ուղեց կանչել նրան, բայց ձայնը դաւաճանեց... Ինսարովը արդէն անցնում էր մօտով, չը բարձրացնելով զուլսը...

—Դմիտրի՛ Նիկանօրովիչ, արտասանեց նա վերջապէս:

Ինսարովը յանկարծակի կանգ առաւ, նայեց... Առաջին րոպէում նա չը ճանաչեց Ելնային, բայց իսկոյն մօտեցաւ նրան:

—Դուք, դուք այստեղ, բացականչեց նա:

Ելնան լուռ յետ ու յետ գնաց մատուռը: Ինսարովը հետեւեց նրան:—Դուք այստեղ, կրկնեց նա:

Ելնան շարունակում էր լուռութիւն պահպանել և միայն նայում էր նրան մի երկար, փափուկ հայեացքով: Ինսարովը աչքերը ցած գցեց:

—Դուք մեր տանիցն էիք գալիս, հարցրեց Ելնան:

—Ո՛չ... ձեր տանից չեմ գալիս:

—Ո՞չ, կրկնեց Ելնան և աշխատեց ժպտալ:—Այդպէս էք դուք կատարում ձեր խոստումները: Ես ձեզ սպասում էի առաւօտից:

—Ես երէկ, յիշեցէք, Ելնա Նիկօլանփա, ոչինչ չը խոստացայ:

Ելնան նորից հագիւ հազ ժպտեց և ձեռքը անցկացրեց

դէմքի վրայով: Դէմքն էլ, ձեռքն էլ շատ գունատ էին:—Դուք, ուրեմն, կամենում էիք գնալ, մնաք բարև չասելով մեզ:

—Այո, կոչտ ու խուլ կերպով արտասանեց ինսարովը:

—Ինչպէս: Մեր ծանօթութիւնից յետոյ, այդ խօսակցութիւններէից, այդ բողոքից յետոյ... Ուրեմն, եթէ ես այստեղ ձեռք չը հանդիպէի պատահաբար (Ելենայի ձայնը սուր հնչեց և նա մի ակնթարթ լռեց) ... դուք կը գնայիք և վերջին անգամ չէիք էլ սեղմի իմ ձեռքը, և դուք չէիք էլ արհեստայ:

Ինսարովը յետ դարձաւ:—Ելենա Նիկողանջեա, խնդրում եմ այդպէս մի խօսէ՛ք: Ես առանց այդ էլ ուրախ չեմ: Հաւատացէ՛ք, իմ վճիռը ես կայացրել եմ մեծ ջանքեր գործ դնելով: Եթէ դուք իմանայիք...

—Ես էլ չեմ ուզում իմանալ, վախեցած ընդհատեց նրան Ելենան,—Եթէ ինչու դուք գնում էք... Երեւի այդպէս է հարկաւոր: Երեւի մենք պիտի բաժանուենք: Դուք առանց պատճառի չէիք կամենայ վշտացնել ձեր բարեկամներին: Բայց միթէ այդպէս են բաժանուում բարեկամները: Մենք բարեկամներ ենք, այնպէս չէ:

—Ո՛չ, ասաց ինսարովը:

—Ի՞նչ... ասաց Ելենան: Նրա թշերը ծածկուեցին թեթեւ կարմրութեամբ:

—Ես հէնց այդ պատճառով էլ գնում եմ, որ մենք բարեկամներ չենք: Մի հարկադրէ՛ք ինձ ասել այն, ինչ ես չեմ ուզում ասել, ինչ չեմ ասի:

—Դուք առաջ ինձ հետ անկեղծ էիք, մի թեթեւ յանդիմանութեամբ արտասանեց Ելենան:—Յիշում էք:

—Այն ժամանակ ես կարող էի լինել անկեղծ, այն ժամանակ ես թագցնելու բան չուէի. իսկ այժմ...

—Իսկ այժմ, հարցրեց Ելենան:

—Իսկ այժմ... Իսկ այժմ ես պիտի հետանամ: Մնա՛ք բարեւ:

Եթէ այդ վայրկեանին ինսարովը բարձրացնէր աչքերը, նայէր Ելենային, կը նկատէր, որ նրա դէմքը աւելի պայծառանում էր, որքան ինքը վրայ էր տալիս յօնքերը և մթնանում. բայց նա յամառութեամբ նայում էր յատակին:

—Դէ՛հ, մնաք բարեւ, Դմիտրի Նիկանօրովիչ, սկսեց Ելենան:—Բայց որովհետեւ մենք արդէն հանդիպել ենք իրար, գոնէ տուէ՛ք ինձ այժմ ձեր ձեռքը:

Ինսարովը մեկնում էր ձեռքը:—Ո՛չ, ես այս էլ չեմ կարող, ասաց նա և նորից յետ դարձաւ:

—Ձե՛ք կարող:

—Չեմ կարող: Մնացէք բարեւ: Եւ նա գնաց դէպի մատուռի դուռը:

—Քիչ էլ սպասեցէք, ասաց Ելենան:—Դուք կարծես վախենում էք ինձանից: Իսկ ես ձեզնից քաջ եմ, աւելացրեց նա մի յանկարծակի թեթեւ զողոյով, որ տարածուեց նրա ամբողջ մարմնի մէջ:—Ես կարող եմ ձեզ ասել... կամենում էք... թէ ինչու դուք այստեղ հանդիպեցիք ինձ: Գիտէք ուր էի ես գրնում:

Ինսարովը զարմացած նայում էր Ելենային:

—Ես գնում էի ձեզ մօտ:

—Ինձ մօտ:

Ելենան ծածկեց դէմքը:—Դուք կամենում էիք ինձ հարկադրել որ ես ասեմ թէ ձեզ սիրում եմ, չէնչաց նա.—ահա... ես ասացի:

—Ելենա, գոչեց Ինսարովը:

Ելենան ընդունեց նրա ձեռքերը, նայեց նրան և ընկաւ նրա կրծքին:

Ինսարովը պինդ գրկեց նրան և լուռ էր: Հարկաւոր չէր որ նա ասէր թէ սիրում է Ելենային: Միայն նրա բացականչութիւնից, մարդու այդ վայրկենական կերպարանափոխութիւնից, միայն նրանից թէ ինչպէս բարձրանում և ցածրանում էր այդ կուրծքը, որին նա այնպիսի հաւատով կպել էր, միայն նրանից թէ ինչպէս նրա մատների ծայրերը զիպան իր մազերին, Ելենան կարող էր հասկանալ, որ ինքը սիրուած է: Ինսարովը լուռ էր, բայց Ելենային էլ հարկաւոր չէին խօսքեր: «Ես այստեղ է, նա սիրում է... էլ ինչ պիտի լինի»: Երջանկութեան խաղաղութիւնը, անվրդով նաւահանգստի, հասած նպատակի խաղաղութիւնը, այն երկնային խաղաղութիւնը, որ նայն իսկ մահին էլ տալիս է թէ միտք և թէ գեղեցկութիւն, լցրել էր Ելենայի ներսը իր աստուածային յորձանքով: Ելենան ոչինչ չէր ուզում, որովհետեւ տիրացել էր ամեն ինչի՝ «Օ՛, իմ եղբայր, իմ բարեկամ, իմ սիրելի...» չէնչում էին նրա շըրթունքները և նա չը գիտէր թէ այդ ում սիրտն էր, նրանք արդեօք թէ իրը, որ այդպէս քաղցր խփում և հալում էր իր կրծքի մէջ:

Իսկ Ինսարովը կանգնած էր անշարժ, նա իր պինդ գրկախառնութեամբ շրջապատել էր այդ նրիտասարդ, նրան անձնատուր եղած կեանքը, նա կրծքի վրայ շօշափում էր այդ նոր, անվերջ թանկագին լուծը. հիացմունքի, անբացատրելի շնորհակալութեան զգացմունքը ջարդել, փռել էր դարձրել նրա ա-

մուր հոգին, և դեռ երբէք չը տեսած արտասունքները երեւա-
յին նրա աչքերում...

Իսկ Ելենան չէր արտասուում. նա միայն կրկնում էր.
«Օհ, իմ բարեկամ, օհ, իմ եղբայր»:

—Ուրեմն դու կը գնաս ինձ հետ ամեն տեղ, ասում էր
Խնսարովը նրան, քառորդ ժամ անցած, առաջուայ պէս պահե-
լով նրան իր գրկի մէջ:

—Ամեն տեղ, աշխարհի վերջը՝ Ուր դու կը լինես, այն-
տեղ էլ ես կը լինեմ:

—Եւ դու չես խաբում, դու գիտես, որ քո ծնողները եր-
բէք չեն համաձայնուի մեր ամուսնութեան:

—Ես ինձ չեմ խաբում. ես այդ գիտեմ:

—Դու գիտես, որ ես աղքատ եմ, համարեա մուրացկան:

—Գիտեմ:

—Որ ես ռուս չեմ, որ ինձ վիճակուած չէ ապրել Ռու-
սաստանում, որ քեզ հարկաւոր կը լինի կտրել քո բոլոր կա-
պերը հայրենիքի, ազգականների հետ:

—Գիտեմ, գիտեմ:

—Դու գիտես նոյնպէս, որ ես ինձ նուիրել եմ մի դժուար,
անշնորհակալ գործի, որ ինձ... մեզ պէտք կը լինի ենթարկուել
ոչ միայն վտանգների, այլ և զրկանքների, գուցէ ստորացման:

—Գիտեմ, ամեն ինչ գիտեմ... Ես քեզ սիրում եմ:

—Որ դու պիտի յետ մնաս քո բոլոր սովորութիւններից,
որ այնտեղ, մենակ, օտարների մէջ, դու, Վ դուցէ, հարկադրու-
ուած կը լինես գործել...

Ելենան ձեռքը դրեց նրա չրթունքների վրայ:—Ես սի-
րում եմ քեզ, սիրելիս:

Խնսարովը սկսեց ջերմ համբուրել նրա նեղլիկ, վարդա-
գոյն ձեռքը. Ելենան չէր հեռացնում ձեռքը նրա չրթունքներից
և մի ինչ որ մանկական ուրախութեամբ մի ծիծաղող հետա-
քրքրութեամբ նայում էր թէ ինչպէս նա ծածկում էր համ-
բոյրներով կամ իր ձեռքը, կամ մատները...

Յանկարծ նա կարմրեց և թագցրեց իր դէմքը նրա կրծքի
վրայ:

Խնսարովը քնքշութեամբ բարձրացրեց նրա գլուխը և ու-
շի ուշով նայեց նրա աչքերին:—Ուրեմն, կեցցես, ասաց նա
նրան, իմ կինը մարդկանց և Աստուծու առաջ...

XIX

Մի ժամ անցած, Ելենան գլխարկը մի ձեռքում, ծածկոցը միւսում, հանդարտ մտնում էր ամարանոցի հիւրասենեակը: Նրա մազերը թեթեւ կերպով ցրուել էին, իւրաքանչիւր թշի վրայ երևում էր փոքրիկ, վարդագոյն բիծ, ժպիտը չէր ուզում իջնել նրա շրթունքներից, աչքերը փակւում էին եւ կիսախուփ նոյնպէս ժպտում էին: Նա հագիւ էր քայլում յոգնածութիւնից, և նրան անորժելի էր այդ յոգնածութիւնը. և ամեն ինչ անորժելի էր նրան: Ամեն ինչ նրան սիրելի և փաղաքշելի էր թւում: Ուվար Իվանովիչը նստած էր պատուհանի առակ. Ելենան մօտեցաւ նրան, զրեց իր ձեռքը նրա ուսին, քիչ ձգուեց և մի Պրոպ ականայ ծիծաղեց:

— Ինչի՞ն, հարցրեց նա, զարմանալով:

Ելենան չը գիտէր թէ ինչ ասէ: Նա ուզում էր համբուրել Ուվար Իվանովիչին:

— Տախտկած... արտասանեց նա վերջապէս:

Բայց Ուվար Իվանովիչը յօնքն անգամ չը շարժեց և շարունակ զարմացած նայում էր Ելենային: Աս վայր գցեց իր ծածկոյն ու գլխարկը, որոնք ընկան Ուվար Իվանովիչի վրայ:

— Սիրելի Ուվար Իվանովիչ, ասաց Ելենան, — ես քնել եմ ուզում, — ես յոգնել եմ. — և նա էլի ծիծաղեց և ընկաւ նրա կողքին գրած բաղկաթոռը:

— Հըմ, արտասանեց Ուվար Իվանովիչը և խաղաղեց մտաները: — Իբր... պէտք է, հա...

Իսկ Ելենան նայում էր իր շուրջը և մտածում էր. «Այս բոլորից ես չուտով պիտի բաժանուեմ... օտարոտի բան. ինձանում ոչ երկիւղ կայ, ոչ կասկած, ոչ ամոսսանք... Ո՛չ, խըղճում եմ մայրիկին»։ Յետոյ էլի բուսաւ նրա առաջ մատուռը, նորից հնչեց նրա ձայնը, նա զգաց իր շուրջը Ինսարովի ձեռքերը: Նրա սիրտը ուրախ-ուրախ, բայց թոյլ կերպով շարժուեց. երջանկութեան յոգնածութիւնը նրա վրայ էլ էր ընկած: Յիշեց նա մուրացկան պառաւին: «Իսկ որ, նա տարաւ իմ վիշտը, մտածում էր նա: Օ՜հ, որքան երջանիկ եմ ես, որքան շուտ, որքան անարժան եմ այդ երջանկութեան: Մնում էր, որ նա մի ամենափոքրիկ կամք ցոյց տար, և կը թափուէին նրա աչքերից քաղցր, անվերջ արտասուքներ: Նա պահում էր այդ արտասուքները միայն նրանով, որ ծիծաղում էր: Ինչ գիրք էլ ընդունում էր նա, թւում էր, թէ աւելի լաւ և յարմար չէր

կարելի. կարծես նրան օրօրում էին: Նրա բոլոր շարժողութիւնները դանդաղ էին և փափուկ. ուր էր կորել նրա փութկոտութիւնը, նրա դանդաղկոտութիւնը: Մտաւ Զօհան. Ելեան վճռեց, որ աւելի չքնաղ դէմք ինքը չէ տեսել: Մտաւ Աննա Վասիլեւիւն. մի ինչ որ բան ծակեց Ելենային, բայց որպիսի քնքշութեամբ նա գրկեց իր բարի մօրը և համբուրեց նրա ճակատը, արդէն թեթեւ կերպով սպիտակած մազերի մօտ: Յետոյ նա գնաց իր սենեակը. ինչպէս այնտեղ ամեն ինչ ժպտում էր նրան: Մի ամօթխած հանդիսաւորութեան և լսադադութեան որպիսի զգացմունքով նստեց նա իր մահճակալի վրայ, այն իսկ մահճակալի, ուր երեք ժամ առաջ նա այնքան դառն վայրկեաններ էր անցկացրել: Ռայց ևս հօ այն ժամանակ գիտէի, որ նա ինձ սիրում է, մտածեց Ելենան, — նոյն իսկ առաջ էլ... Ահ, ոչ, ոչ, սա մեղք է. Շուր իմ կիներն ես...», շքեղաց նա, երեսը ծածկելով ձեռքերով, և ծունկ չոքեց:

Երեկոյեան դէմ նա աւելի մտախոհ դարձաւ: Տխրութիւն պատեց նրան, երբ մտածեց թէ դեռ չուտ չի տեսնուի Ինսաւօվի հետ: Ինսարօվը չէր կարող, կասկածներ չը յարուցանելով, մնալ Բերսենեփի մօտ, ուստի ահա ինչ էին վճռել նա և Ելենան. Ինսարօվը պիտի վերադառնար Մոսկուա և մինչև աշունը մի երկու անգամ հիւր գնար նրանց մօտ. իր կողմից Ելենան խոստացաւ գրել նրան նամակներ և, եթէ կարելի կը լինէր, նշանակել տեսակցութիւն կունցօվի մօտ մի որ և է տեղ: Թէյին նա իջաւ հիւրասնդակը և այդտեղ գտաւ իր բոլոր տնայիններին և Շուրին, որ մի սուր հայեացք գցեց նրա վրայ, հէնց որ նա երևաց: Ելենան ուզում էր խօսել նրա հետ բարեկամաբար, ինչպէս անցեալներում, բայց վախեց որ Շուրինը մի բան կը հասկանայ, վախեց ինքն իրանից: Նրան թւում էր, թէ Շուրինը իզուր չէր երկուշաբթից աւել իրան հանգիստ թողել: Շուտով ևկաւ Բերսենեփը և յայտնեց Աննա Վասիլեւիւնային ողջոյն Ինսարօվի կողմից, մի և նոյն ժամանակ ներողութիւն այն պատճառով, որ նա վերադարձաւ Մոսկուա, չը յայտնելով նրան իր յարգանքները: Ինսարօվի անունը օրուայ ընթացքում առաջին անգամն էր արտասանւում Ելենայի առաջ. նա զգաց, որ կարմրեց. միևնոյն ժամանակ նա հասկացաւ, որ իրան հարկաւոր է ափսոսանք յայտնել այդպիսի մի լաւ ծանօթի գնալու առիթով. բայց նա իրան չէր կարող հարկադրել կնքիք դրտնելու և շարունակում էր նստել անշարժ և անխօս, մինչդեռ Աննա Վասիլեւիւնն ախ էր քաշում և վշտացած էր: Ելենան

տշխատում էր Բերսենսկի մօտ լինել. նրանից չէր վախենում, թէ և նա զիտէր իր գաղտնիքի մի մասը. նա Բերսենսկի թեի տակ ազատւում էր Շուբինից, որ շարունակ նայում էր նրան ոչ թէ հեգնանքով, այլ ուշադրութեամբ: Բերսենսկի վրայ էլ այդ երեկոյ իջել էր մի տարակուսանք. նա սպասում էր թէ կը տեսնէ Ելենային աւելի տխուր: Ելենայի բախտից, Բերսենսկի և Շուբինի մէջ սկսուեց վէճ արուեստի մասին. Ելենան յետ քաշուեց և կարծես քնի մէջ լսում էր նրանց ձաները: Փոքր առ փոքր, ոչ միայն նրանք, այլ և ամբողջ սենեակը, այն ամենը ինչ չըջապատում էր նրան, թուաց իբրև երազ. ամեն ինչ—և՛ սեղանի վրայ դրած սամովարը, և՛ Ուվար Իվանովիչի կարճիկ ժիլետը, և՛ Զօնայի հարթ եղունկները, և՛ մեծ իշխան Կոնստանտին Պավլովիչի իւզաների պատկերը պատի վրայ. ամեն ինչ կուր էր գնում, ամեն ինչ ծածկւում էր թեթեւ ծխով, ամեն ինչ դադարում էր զոյութիւն ունենալուց: Նա միայն խղճում էր ամենքին: «Ինչու համար ես ապրում», մտածում էր նա:

—Դու քնել ես ուզում, Լէնօչկա, հարցրեց նրան մայրը: Նա չը լսեց մօր հարցը:

—Անարդար ակնարկութիւն, ասում ես դու... Այս խօսքերը, որ սուր կերպով արտասանեց Շուբինը, յակարձակի գրգռեցին Ելենայի ուշադրութիւնը—Շնորհ արա, շարունակեց նա,—հէնց ճաշակն էլ դրա մէջ է: Արդար ակնարկութիւնը վնասութիւն է պատճառում—դա քրիստոնէաբար չէ, դէպի անարդարը մարդ անտարբեր է—սա յիմար բան է, իսկ կիսարդար ակնարկութիւնից նա թէ զրգւում է և թէ անհամբերութիւն է զգում: Օրինակ, թէ ես ասեմ թէ Ելենա Նիկոլայեւնան սիրահարուած է մեղանից մէկի վրայ, ինչ տեսակ ակնարկութիւն կը լինի սա, հը՞:

—Ահ, մուսիօ Պօլ, ասաց Ելենան,—ես կը կամենայի ցոյց տալ ձեզ իմ անբուականութիւնը, բայց ճշմարիտ չեմ կարողանում ես շատ յոգնած եմ:

—Ինչու չես պատկում, ասաց Աննա Վասիլեւնան, որ երեկոյեան ինքն էլ միշտ նիրհում էր, ուստի և հաճութեամբ ուղարկում էր քնելու միւսներին—Բարեւիր ինձ, և դնա, Աստուած քեզ հետ, Անդրէյ Պետրովիչը կը ներէ:

Ելենան համբուրեց իր մօրը, գլուխ տուեց ամենքին և գնաց: Շուբինը ճանապարհ գցեց նրան մինչև դուռը—Ելենա Նիկոլայեւնա, շնջաց նա նրան շէմքում. դուք ոտի տակ էք տալիս մուսիօ Պօլին. դուք անգթաբար ման էք գալիս նրա

վրայով, իսկ մուսիօ Պօլը օրհնում է ձեզ, և ձեր ոտները, և կօշիկները ձեր ոտների վրայ, և ձեր կօշիկների տակը:

Ելնան ուսը վեր քաշեց, աղամայ ձեռքը մեկնեց նրան — ոչ այն ձեռքը, որը համբուրել էր Խնսարովը — և, վերադառնալով իր սենեակը, իսկոյն հանեց շորերը, պառկեց և քնեց: Նրա քուռը խոր էր, անվրդով. այդպէս երեխաներն էլ չեն քրնում. այդպէս քնում է միայն առողջացած մանուկը, երբ մայրը նստում է նրա օրօրոցի կողքին և նայում է նրան, և լսում է նրա շնչառութիւնը:

XX

— Մի բոպէ ինձ մօտ մտի՛ր, ասաց Բերսենեկին Շուքինը, հէնց որ հրաժեշտ տուեց Աննա Վասիլեփային — ես մի քանի բան ունեմ քեզ ցոյց տալու:

Բերսենեկը դնաց նրա սենեակը՝ Նրան զարմացրեց արձանիկների, անդրիկների բազմութիւնը, որոնք փաթաթուած էին թաց փալասների մէջ և շարուած էին սենեակի բոլոր անկիւններում:

— Դու, ինչպէս տեսնում եմ, լուրջ կերպով ես աշխատում, նկատեց նա Շուքինին:

— Պէտք է մի բան արած լինել, պատասխանեց նա: — Մէկը չէ աջողւում, պէտք է փորձել միւսը: Բայց ես, իբրև կօրսիկացի, աւելի վրիժառութեամբ եմ զբաղւում, քան զուտ արուեստով: *Trema, Bisanzia!*

— Ես քեզ չեմ հասկանում, ասաց Բերսենեկը:

— Այ, սպասի՛ր: Ահա, հաճեցէք նայել, սիրելի բարեկամ և բարերար, իմ վրէժը համար առաջին:

Շուքինը բաց արեց մի պատկեր, և Բերսենեկը տեսաւ Խնսարովի շատ լաւ նման, հիանալի անդրին: Դէպքի գծերը Շուքինը ըմբռնել էր ճիշտ ամենամանր մանրամասնութիւնների մէջ անգամ և տուել էր նրանց մի փառաւոր արտայայտութիւն. անկեղծ, աղնիւ և համարձակ:

Բերսենեկը հիացաւ:

— Սա ուղղակի մի հիանալի բան է, ազադակեց նա: Շնորհաւորում եմ քեզ: Կարելի է ցուցահանդէս ուղարկել: Ինչո՞ւ դու այս փառահեղ գործը անուանում ես վրէժ:

— Այն պատճառով, սրբ, որ ես մտադիր եմ մատուցանել այս, ինչպէս դուք բարեհաճեցիք անուանել, հոյակապ գործը Ելնայ Նիկօլայեփային նրա անուան օրը: Հասկանում էք

դուք այս ալլաբանութիւնը: Մենք կոյր չենք, մենք տեսնում ենք թէ ինչ է կատարուում մեր շուրջը, բայց մենք ջենտլմեններ ենք, ողորմած պարոն, և վրէժ ենք հանում ջենտլմենի պէս:

—Իսկ ահա, աւելացրեց Շուրինը, բայց անելով մի ուրիշ պատկեր, — որովհետեւ արուեստագէտը, համաձայն նորագոյն գեղարդէաների կարծիքին, ունի նախանձելի իրաւունք մարմնայնելու իր մէջ ամեն տեսակ կեղտոտութիւններ, դարձնելով դրանց ստեղծագործութեան գոհարներ, ուստի մենք, այս գոհարը կառուցանելիս, որ համար երկրորդն է կազմում, վրէժ ենք հանել ոչ թէ ջենտլմենների պէս, այլ ուղղակի *en canaille*.

Նա ճարպիկութեամբ յետ քաշեց կտաւը, և Բերսենսկը տեսաւ զանտանեան ճաշակով մի արձանիկ, որ ներկայացնում էր նոյն Ինսամբովին: Աւելի չար և սրամիտ մի բան չէր էլ կարելի հնարել: Երիտասարդ բօլշարը ներկայացրած էր խոյի կերպարանքով, որ երեւի ոտների վրայ բարձրացել էր և խոնարհել էր երկջիւրիները հարուած տալու համար: Բուժ վերուածութիւնը, զոռոգութիւնը, յամառութիւնը, անտաշութիւնը, սանձաւարիակ միտքը այնպէս էլ կնքուած էին «նրբագեղմ ոչխարների ամուսնու» դէմքի վրայ, մինչդեռ նմանութիւնը այնքան շլացուցիչ էր, անկասկած, որ Բերսենսկը չը կարողացաւ չը քրքրալ:

—Ի՞նչ է, զուարճալի է, ասաց Շուրինը. — ճանաչեցիր հերոսին: Նոյնպէս խորհուրդ ևս տալիս ցուցահանդէս ուղարկել: Այս մէկը, եղբայր, ևս ինձ կը նուիրեմ իմ անուան օրը... Չերդ մեծապատուութիւն, թոյլ տուէք մի օյն հանել:

Եւ Շուրինը երեք անգամ վեր ցատկեց, խփելով իր ետեւին կրունկներով:

Բերսենսկը յատակից վերջրեց կտաւը և գլխից արձանիկի վրայ:

—Ա՛հ դու մեծահոգի, սկսեց Շուրինը, — ով է պատմութեան մէջ առանձնապէս մեծահոգի համարուում: Բայց դա մի և նոյն է: Իսկ այժմ, շարունակեց նա, հանգիստոր և տխուր կերպով բայց անելով երրորդ պատկերը, որ կաւի մի բաւական մեծ կտոր էր, — դու կը տեսնես մի բան, ինչ կ'ապացուցանէ քո բարեկամի ճշմարտութիւնը և նրբատեսութիւնը: Դու կը համոզուես, որ նա, այնուամենայնիւ, իրրի իսկական գեղարուեստագէտ, զգում է և ինքն իրան ապտակելու կարիքը և օգուտը: Նայիր:

Կտաւը բարձրացաւ, և Բերսենսկը տեսաւ երկու, մի-

մեանց կողքին և մօտիկ դրած, կարծես իրար կպած գլուխներ... Նա իսկոյն չը հասկացաւ թէ բանն ինչումն է, բայց ուշադրութեամբ նայելով, ճանաչեց, որ մէկը Աննուկան էր, միւսը՝ ինքը Շուրինը։ Բայց դրանք աւելի ծաղրանկարներ էին, քան պատկերներ։ Աննուկան ներկայացրած էր իբրեւ գեղեցիկ, չաղ աղջիկ ցածրիկ ճակատով, իւղակայած աչքերով և ցցուած քթով։ Նրա խոշոր շրթունքները անպատկառ ծիծաղում էին. ամբողջ դէմքը արտայայտում էր զգայութիւն, անհոգութիւն և կտրիճութիւն, ոչ առանց բարեհոգութեան։ Իրան Շուրինը ներկայացրել էր խմած, նիհարացած մի զուարճասէր՝ ներս ընկած թշերով, նօսր մազերի անզօր կախում չհիւսնորով, անմիտ արտայայտութեամբ հանգած աչքերի մէջ, մեռելի սըրուած քթով։

Բերսեննովը զգուանքով յետ քաշուեցւոյ—Ի՞նչպէս է այս երկուսը, եղբայր, ասաց Շուրինը։—Չեմ բարեհաճի արդեօք հնարել արժանաւոր ստորագրութիւն։ Առաջին երկու բաների համար ես արդէն գտել եմ ստորագրութիւններ։ Անդրիի տակ կը լինի. «Հէրոս, որ մտադիր է ազատել իր հայրենիքը»։ Արձանիկի տակ, «Ջգուչացէք, երչիկագործներ»։ Իսկ այս մէկի տակ—«Ինչ ես կարծում—Գեղարուեստագէտ Պաւել Նալիովելի Շուրինի սպալան»... Լաւ է։

—Բաւական է, պատասխանեց Բերսեննովը։ Արժէր ժամանակ կորցնել այդպիսի... Նա իսկոյն չը գտաւ յարմար խօսք։

—Ջգուելի բանի համար, ուղղում ես ասել։ Ոչ, եղբայր, ներիր, եթէ մի բան կայ, որ պիտի ցուցահանդէս դնայ, դա հէնց այս արձանիկն է։

—Իսկ որ զգուելի բան, կրկնեց Բերսեննովը։—Ի՞նչ դատարկաբանութիւն։ Քեզանում բոլորովին չը կան այդ տեսակ զարգացման դրաւականներ, որոնցով մինչև այժմ, զժբախտաբար, այնքան առատասպէս օժտուած են մեր արտիստները։ Դու ուղղակի զրպարտել ես քեզ։

—Դու ենթադրում ես, մոռալ կերպով ասաց Շուրինը։—Եթէ ինձանում չը կան այդ դրաւականները և եթէ դրանք պատուաւորուեն ինձ վրայ, դրա մէջ մեղաւոր կը լինի... մի անձնաւորութիւն։ Դու դիմես, աւելացրեց նա, տրադիկարար յօնքերը կիտելով—ես արդէն փորձել եմ խմել։

—Սուտ ես ասում։

—Փորձել եմ, Ստտուած է վկայ, պատասխանեց Շուրինը

և յանկարծ ժպտաց, նրա դէմքը բացուեց,—բայց համ չունի, եղբայր, կոկորդուսն չէ գնում և գլուխս յետոյ թմբուկի նման է։ Ինքը մեծ Լուչչիխինը—Խարլամպիյ Լուչչիխինը, Մոսկուայի, իսկ ուրիշների ասելով, Վելիկո-Րոսսիայի առաջին ձագարը,—յայտարարեց թէ ինձանից բան չի դուրս գայ։ Ինձ, ինչպէս նա յայտնեց, չիչը ոչինչ չէ ասում։

Բերսենսկը բարձրացրեց ձեռքը որ խփէ արձանիկին, բայց Շուբինը կանգնեցրեց նրան։

—Մի խփիր, եղբայր. սա հարկաւոր կը լինի իրրեւ դաս, իրրեւ խրտուիլակ։

Բերսենսկը ծիծաղեց։

—Որ այդպէս է, ես կը խնայեմ քո խրտուիլակը, ասաց նա, և կեցցէ յաւիտենական, մաքուր արուեստը։

—Կեցցէ, կրկնեց Շուբինը։—Նրանով լաւը լաւագոյն է, իսկ վատը ցաւ չէ։

Բարեկամները պինդ սեղմեցին իրար ձեռքերը և բաժանուեցին։

XXI

Ելնայի առաջին զգայմունքը, երբ նա զարթնեց, ուրախական վախն էր «Միթէ, միթէ», հարցնում էր նա իրան և նրա սիրտը թուլանում էր երջանկութիւնից։ Յիշողութիւնները թափուեցին նրա վրայ... նա ընկղմուեց նրանց մէջ։ Յետոյ էլի նրա վրայ իջաւ նոյն երանաւէտ, հիացական հանգարտութիւնը։ Բայց առաւօտի ընթացքում Ելնային կամաց-կամաց տիրեց անհանգստութիւնը, իսկ հետեւեալ օրերում նա ծանրութիւն, ձանձրոյթ էր զգում։ Ճիշտ է, նա հիմա գիտէր թէ ինչ էր ուղում, բայց այդ բանը թեթեւութիւն չէր բերում նրան։ Այն անմոռանալի տեսակցութիւնը ընդմիշտ դուրս էր նետել նրան հին ճանապարհից, նա այլ ևս կանգնած չէր այդ ճանապարհի վրայ, նա հեռու էր, մինչդեռ չորս կողմում ամեն ինչ կատարւում էր սովորական կարգով, ամեն ինչ ընթանում էր առաջուայ պէս, կարծես ոչինչ չէր փոխուել. առաջուայ կեանքը առաջուայ նման առաջ էր գնում, առաջուայ նման յոյս ունենալով Ելնայի մասնակցութեան և աջակցութեան վրայ։ Ելնան փորձեց սկսել մի նամակ Ինսարովին, բայց այդ չաջողուեց, խօսքերը թղթի վրայ դուրս էին գալիս մեռածի նման ասես թէ ստի նման։ Իր յիշատակարանը նա վերջա-

ցրեց. վերջին տողի տակ նա քաշեց մի մեծ գիծ. Դա անցկալն էր, իսկ նա իր բոլոր մտածմունքներով, իր ամբողջ էութեամբ մտել էր ապագայի մէջ. Ծանր էր նրա համար. նստել մօր հետ, որ ոչինչ չէ կասկածում, լսել նրան, պատասխանել նրան, խօսել նրա հետ—թւում էր Ելենային մի ինչ-որ յանցաւոր բան. նա զգում էր, որ իր մէջ կայ մի ինչ-որ կեղծիք. նա վրդովւում էր, թէեւ կարմրելու պատճառ չուներ. մի քանի անգամ նրա հոգու մէջ գլուխ բարձրացրեց համարեա անդիմադրելի ցանկութիւն ասելու ամեն ինչ առանց թաղցնելու, ինչ էլ լինէր. «Ինչո՞ւ,—մտածում էր նա,—Դմիտրին հէնց այն ժամանակն էլ, հէնց մատուռից չը տարաւ ինձ, ուր կամենում էր. Զասանց նա, որ ես նրա կիներն եմ Աստուծու առաջ. Ինչո՞ւ ես այստեղ եմ. նա յանկարծ սկսեց խրանել ամենքից, նոյն-իսկ Ուվար Իվանովիչից, որ այժմ աւելի եւս քան երբեքից տարակուսանքի մէջ էր, և խաղացնում էր մասնիկներ. Այլ եւս ոչ փաղաքշական, ոչ սիրելի, ոչ նոյն-իսկ երազ չէր թւում նրան ամեն ինչ, որ չըջապատում էր նրան. չըջապատը կօշմարի պէս ճնշում էր նրա կտրծքը մի անշարժ, մահացու ծանրութեամբ. նա կարծես և յանդիմանում էր Ելենային, և՛ անբաւական էր, և չէր էլ ուղում ճանաչել նրան... Դու էլի մերն ես, այսպէս էր կարծես ասում չըջապատը. Նոյն իսկ Ելենայի խեղճ սաները, ճնշուած թռչուններն ու կենդանիները նայում էին նրան—գոնէ նրան այդպէս էր թւում—անփտահ կերպով, թշնամաբար. նա ամօթ էր զգում և ամաչում էր իր զգացմունքներէր. «Զէ որ սա, այնուամենայնիւ, իմ տունն է», մըտածում էր նա, «իմ ընտանիքը, իմ հայրենիքը...»—«Ոչ, սա այլ եւս քո հայրենիքը չէ, քո ընտանիքը չէ», ասում էր նրան մի ուրիշ ձայն. Երկուղը տիրեց նրան և նա զայրանում էր իր փոքրոգութեան վրայ. Փորձանքը նոր միայն էր սկսւում, իսկ նա արդէն կորցնում էր համբերութիւնը... Այդ էր նա խոտացել:

Շուտ չը կարողացաւ նա խելքը գլուխը հաւաքել. Բայց անցաւ մի, երկու շաբաթ... Ելենան մի քիչ հանգստացաւ և սովորեց իր նոր գրութեան. նա գրեց երկու փոքրիկ տոմարկ Իսասարովին և ինքը տարաւ նրանց պոստը. թէ ամօթխածութիւնից, թէ հպարտութիւնից նա երեք չէր հաւատայ իր ազախնին. նա արդէն սկսել էր սպասել Իսասարովին... Բայց Իսասարովի տեղ մի գեղեցիկ առաւօտ եկաւ. Նիկօլայ Արտեմովիչը: